Իսկ յետոյ երբ մեր այդ մարդասիրական գործը, մեր այդ պարտաւորութիւնը կատարած կը լինենք,—եթէ ուզենք՝ դարձեալ միմեանց միսն ուտենք....

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք Թիֆլիսեցի Գրիգոր և Աղէքսանդր Կարապետեան Եղիազարեանց եղբայրներից 25 ռուբլ յօգուտ Վանի սովատանջների, որ կը հանձնենք «Արարատեան» ընկերութեանը։

—

Դարձեալ յիշեցնում ենք ներկայ տարվայ «Մշակի» բաժանորդներին որ այս 1880 թվին հարկաւոր չէ 7 կոպէկանոց փոստի մարկա ուղարկել ապահովագրի համար։

—

Խնդրում ենք մեր թղթակիցներից որոշ և մաքուր գրել իրանց թղթակցութիւնները, եթէ ոչ նամակները կը մնան առանց կարդացած լինելու։

—

ԹԷԼԱՒԻՑ մեզ գրում են յունվարի վերջին օրերից որ այնտեղ սաստիկ ցրտեր են անում։ Ամեն պիտոյքները թանգացել են։ Ալիւրի հասարակ տեսակի պուդը արժէ 2 ռուբլ, փայտի մի սայլ, որ առաջ արժէր 2 ր., կամ 2 ր. 50 կոպ., այժմ ծախվում է 5 ր., կամ 5 ր. 50 կոպ., ոչխարի մսի ֆունտը արժէ 13 կ., պանիր 30 կոպ.։

—

ՄԵՆԴԼԱՐԵԼԻՍԻՑ մեզ գրում են որ այդ գիւղի ուսուցչական խումբը մի քանի ուրիշ երիտասարդների մասնակցութեամբ շուտով ներկայացնելու է «Պէյզա» կոմէդիա և «Բաղցածներ» վոդէվիլը։

—

ՋԱԼԱԼ-ՕՂԼՈՒՑ հաղորդում են որ այս օրերս մի Ջալալ-օղլեցի, իր բարեկամներին նամակներ գրելուց յետոյ, գիւղից դուրս անձնասպանութիւն է գործել։

—

Մենք յայտնեցինք մեր ընթերցողներին, որ ներկայ թվի յունվարի 15-ին «Մշակը» ունէր 550 բաժանորդ։ Իսկ այսօր մենք ունենք արդէն 800 բաժանորդ։

—

„Մշակի" ներկայ համարում տպում ենք Վահան վարդապետ Պարտիզակցու Էրզրումի անգլիական հիւպատոս Տրօթթէրին ներկայացրած զեկուցումը Հայաստանի վիճակագրական դրութեան մասին։ Իսկ հետեւեալ համարներից կը սկսենք տպագրել նոյն վարդապետի ընդարձակ տեղեկագիրը թիւրքաց Հայաստանի մասին, որ նոյնպէս ներկայացվեցաւ Էրզրումի անգլիական հիւպատոսին։ Վահան վարդապետը ճանապարհորդեց Հայաստանում, այդ երկրի հետ ծանօթանալու դիտաւորութեամբ, կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հրամանով։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են որ այժմ այդտեղ հացի պուդը ծախվում է 3 ր. 50 կոպէկով։

—

ԹԻՖԼԻՍԻ Վանքի Մայր-եկեղեցու աւագ-քահանայ Յովհաննէս Տէր-Պողոսեան Սարգսեանց յանձնեց մեր խմբագրութեանը 50 ռուբլ յօգուտ Վանի սովատանջների։ Ուղարկելով այդ փողերը առ ժամանակ „Արարատեան" ընկերութեանը, խնդրում ենք այդ ընկերութեանը ուշադրութիւն դարձնել թէ փողերից որոնք յօգուտ ընկերութեանն են նուիրվում և որոնք յօգուտ սովատանջների։

—

Խնդրում ենք „Մշակի" բոլոր բաժանորդներին և թղթակիցներին մեր խմբագրութեան անունով թէ նամակներ, թէ թղթակցութիւններ և թէ փող ուղարկելու ժամանակ ուղղակի դիմել միայն այս հասցէով։ Тифлисъ, въ Редакцію „Мшакъ", կամ նոյնպէս Тифлисъ, Григорію Арцруни։ Ուրիշ որ և է հասցէով գրված նամակների կամ թղթակցութիւնների և ուղարկված փողի համար մենք պատասխանատու չենք։

—

Ստացանք պ. բժշկապետ Կասպարեանցից 25 ռուբլ յօգուտ Վանի սովատանջների։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ հաղորդում են որ այդտեղ այս վերջին օրերս մեծ ցրտեր էր անում։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու վրա շատ ձիւն էր եկել, այնպէս որ երկաթուղու երթեւեկութիւնը դժուարացել էր։

—

Պ. Սլավիանսկու կոնցէրտը որ պէտք է լինէր փետրվարի 10-ին, կը լինի վաղը, փետրվարի 13-ին, Արծրունու թատրոնում։ Պ. Սլավիանսկի դնացած էր Քութայիս մի քանի օրով, այդ քաղաքում կոնցէրտ տալու համար, բայց չը կարողացաւ իր ժամանակին վերադառնալ, սաստիկ ցրտերի պատճառով։

—

Մեզ գրում են ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ, որ այնտեղ այնպիսի ցրտեր է անում, որ դիտաւորութիւն կայ քաղաքի բոլոր դպրոցները ժամանակաւորապէս փակելու։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Այստեղի թատրոնական խումբը պատրաստվում է մի ներկայացումն տալ յօգուտ մեր սիրելի դերասան Սարգսեանի և նրա ամուսնու։ Ցուսով ենք որ երևանցիները ցոյց կը տան իրանց համակրութիւնը այդ ներկայացմանը։ «Մշակի» № 12-ի առաջնորդող յօդուածը, «ինչպէս է վարվում Թիւրքիան» շատ տխուր տպաւորութիւն է գործել ընթերցողների վրա։ Մինչև անգամ «Մշակին» հակառակ անձինք համակրութեամբ են վերաբերվում դէպի այս յօդուածը։

—

Փետրվարի 5-ից մեր մշտական թղթակիցը ԵՐԵՒԱՆԻՑ գրում է մեզ, որ Երևանում եղանակը մի փոքր սկսել է մեղմանալ։

—

ՄԵՆԴԼԱՐԵԼԻՍ գիւղից մեզ գրում են, որ այդտեղի դպրոցը այս տարի ստանում է հետեւեալ պարբերական հրատարակութիւնները։ «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Փոյթ», «Кавказъ», «Ման կավարժական թերթ» (եթէ հրատարակվի), «Недѣля» և «Иллюстрированный Миръ»։ Բոլորի բաժանորդագիրը նուիրատուութեամբ հաւաքել է պ. Ց. Խաչատրեանց։

—

ԲԱՇ-ՇՈՐԱԳԵԱԼ գիւղից մեզ գրում են յունվարի 17-ից։ «Բաշ-Շորագեալ գիւղի «Սուրբ-Սահակեան» դպրոցի աշակերտները իրանց ուսուցիչների հակադութեամբ անցեալ 1879 թվի նոյեմբեր ամսին կազմեցին մի ընթերցասիրաց ընկերութիւն։ Առ այժմ այդ ընկերութիւնը ունի 39 անդամ։ Անդամներից իւրաքանչիւրը պարտաւորվում է ամսական 5 կոպէկ վճարել, և այդպիսով հաւաքվող գումարը պէտք է գործադրվի ընթերցանութեան գրքերը գնելու վրա։ Որպէս զի մասնաւոր նուէրները կարգով և անկորուստ պահպանվին, ընտրվեցան անդամների մէջից մի գանձապահ, մի հաշուատես և մի մատենապահ։ Այդ մասին հաղորդված է Կարսի գերապատիւ առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանցին։ Սրբազանը համակրելով այդ գործին իր կողմից ընծայեց ընկերութեանը 83 հատոր թէ մանր, և թէ խոշոր գրքեր խոստանալով այսուհետև օգնել ընկերութեանը և բարոյապէս։ Դպրոցի աշակերտները տեսնելով սրբազանի և Կարսի դրացարանի վարչութեան համակրութիւնը, ուրախացած և քաջալերված՝ աւելի էլ եռանդ ստացան աշխատելու և իրանց սկսած օգտաւէտ գործը առաջ տանելու։»

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են որ այս օրերս այդտեղի վիճակաւոր առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանց սրտաջարմ քարող կարդաց եկեղեցում Վանի սովատանջների վերաբերութեամբ։ Առաջնորդի քարոզից դրդված արդէն ստորագրութիւն է բացվել սովատանջների համար։ Նուէրները լինում են 50 ռուբլից ոչ աւել և 5 ռուբլից ոչ պակաս։

—

Մեզ գրում են որ ԿԱՐՍԻ մէջ կայ մի հայ քահանայ, որ շատ սիրում է հանաքներ անել։ Ահա ինչ տեսակ են նրա հանաքները։ Նա, օրինակի համար, պսակում է մի զոյգ բոլորովին ապօրինի կերպով և երբ հոգևոր իշխանութիւնը նրան նախատում է իր արածի համար, նա պատասխանում է թէ՝ հանաք եմ արել։ Դիցուք եկեղեցուց կորչում է թանգագին կազմով մի աւետարան, սուրբ գիրքը որոնում են տարիներով և վերջապէս գտնում են տէր-հոր տանը,—և նա առանց ամաչելու, ժպտալով պատասխանում է «ճանաք եմ արել։» Շատ անգամ կորչում են եկեղեցու մոմերը, անհետանում են եկեղեցու փողերը,—և երբ որ այդ բոլորը գտնվում է տէր-հոր տանը այդ վերջինի պատասխանը միշտ լինում է, «Էհ.... հանաք էի արել...»

—

«Обзоръ» լրագիրը իր սովորական յանդգնութեամբ կպչում է մեզ Ղարաքլիսի անտառապետի գործի մասին։ Նա իր սովորական յանդուգն ձևերով քարոզներ է կարդում մեր գլխին խմբագրի պարտաւորութիւնների մասին, առհասարակ։ Մենք բոլորովին դիտաւորութիւն չունենք հաշիւ տալ պ. Նիկոլաձէին մեր արածի մասին և իրաւունք չենք տալիս նրան մեզ որ և է բանում սովորցնել։ Մենք շատ լաւ գիտենք մեր պարտաւորութիւնները։ Երբ Ղարաքլիսի անտառապետը յայտնել է մեզ դէմ դանգատվելու ցանկութիւնը, մեր թղթակիցները գրեցին մեզ մի նամակ, որի տակ ինն մարդ ստորագրեցին, յայտնելով որ իրանք են յանձն առնում դատարանի առջև պատասխանատուութիւնը, հէնց որ անտառապետը դանգատվի։ Այդ նամակը մենք պահած ունենք։ Այսուհետև մենք մեր արժանաւորութիւնից ստոր ենք համարում պատասխանել պ. Նիկոլաձէին, որ ինքն էլ կարօտ է գրականան աղնուութեան մէջ դասեր առնելու.... Առհասարակ այն պատասխանները, որոնք նրան ձեռնտու չեն, նա չէ արտատպում, կամ աշխատում է այնպէս թարգմանել որ հակառակորդի միտքը աղավաղվի։ Եւ այդ տեսակ միջոցներ գործ դնողները յանդգնում են առանց կարմրելու ուրիշներին սովորեցնել գրականան աղնուութիւն։ Մենք յոյս չունենք որ այդ մեր պատասխանը արտատպվի «Обзоръ» լրագրում, կամ եթէ արտատպվի էլ, գիտենք որ թարգմանութիւնը դիտմամբ ամենանանձուն կերպով արած կը լինի, որպէս զի միտքը կորչի....Մենք վաղուց ընտելացել ենք պ. Նիկոլաձէի սովորութեանը այդ կերպ վարվել այն պատասխանների հետ, որոնք ռուսերէն լեզուով ճիշդ կերպով հրատարակելը նրան ձեռնտու չէ։ Դա կը լինի մեր վերջին պատասխանը պ. Նիկոլաձէին։ Շարունակել նրա լրագրի հետ բանակաւել, կը նշանակէ իր պատիւը ստորացնել։ Այսուհետև մենք ստիպված կը լինենք նրա հետ էլ վարվել այնպէս, ինչպէս և մի քանի այլ լրագիրների հետ, որոնց կարելի է միայն արհամարել։

—

Ստացանք յօգուտ Վանի սովալուկների Թիֆլիսաբնակ պ. Մէքայէլ Սաղամէլեանցից 10 ր. և նրա ամուսին տիկին Դարիա Սաղամէլեանցից նոյնպէս 10 ռուբլ։

—

Ստացանք Թիֆլիսաբնակ պ. Յարութիւն Այվազեանից յօգուտ Վանի սովալուկների 5 ռուբլ։

—

ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան հոգևոր դպրոցի տեսչի պաշտօնավարը խնդրում է մեզ տպել հետեւեալը։ «Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի հայ հասարակութեանը, որ ներկայ փետրվար ամսի 14-ին Ներսիսեան հայոց հոգևոր դպրանոցը տօնելու է իր տարեդարձը, ուստի խնդրում եմ մեր ազգայնոց բարեհաճել չնորհ բերել այն օրը առաւտեան ժամը 10-ին, Վանքի Մայր-եկեղեցին ս. պատարագին և երեկոյեայ հանդիսաւոր հիմնադրի Ներսէս V-ի հոգեհանգստին և ապա Ներսիսեան հին ուսումնարանի դահլիճը, ուր կը կարդացվի հաշիւ ըստ ուսումնական մասի։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆ

—

Բ.

Հայաստանի մէջ հողին ազգային—քաղաքական և տնտեսական տեսակէտներով արժէքին վրա մեր Ա. յօդուածին 10 հատուածներուն մէջ ամփոփած գաղափարաց իբրև հետեւութիւն կրնամք։

1.—Թէ պէտք չէ որ Հայաստանի Հայք իրենց հողերն օտարաց վաճառեն, կամ՝ ուրիշ որ և է կերպիւ ձեռքէ հանեն։

Մեր Հայաստանցի ազգայինք պէտք է նախ ըմբռնեն այն ոչ միայն առևտրական՝ այլ և բարոյական և ազգային արժէքը զոր ունին իրենց հողերն։ Երկրորդ, քանի որ ազգաւութիւնը մեծ փորձութիւն մ'է իրենց, պէտք է ի նկատ առնուն սա կէտը թէ իրենց երկրին մէջ հողն առևտրական տեսակէտով այնքան քիչ արժէք ունի, որ թշուառութեան դէմ մեծ սփոփանք կամ կատարեալ փոխարինութիւն ձեռք բերած չեն կրնան լինիլ զայն վաճառելով։ և ըստ որում փստահ եմք որ ազգային զգացմունք օտար չեն իրենց, պէտք է ուրիշ կերպիւ դէմ դնեն այդ փորձութեան։ Նաև կրնան ի նկատ առնուլ մեր Ի ստորև բերած քանի մ'առաջարկութիւնները։

2.—Թէ պէտք է որ Բղվայ և Զարսանճաքի և ուրիշ տեղերու ազգայինք իրենց հողային դատերուն և բողոքներուն վրա պրնդեն։

Թանզիմաթէն առաջ, Հայաստանի հողը մեծ մասամբ Իսլամ և մանաւանդ Քիւրդ կալուածատէրերու (սպահի) ձեռք էր, դրութիւն մը, որ Եւրոպոյ վարդի կալուածատիրական իշխանութիւնները (ֆէօտալիթէ) կը յիշեցնէր ամեն կերպիւ։ Հայք, երկրին դարաւոր տէրերն, այդ այլազգի կալուածատէրերուն վրա աշխատելու պարտաւորած էին իբրև լոկ գործաւոր կամ իբրև վարձակալ, բայց գործնականապէս առնոց ստրուկն էին, ճիշդ ինչպէս միջին դարու մէջ կը լինէր Եւրոպա։

Թանզիմաթն այս անարդար դրութիւնը ջնջեց։ Կառավարութիւնն այդ հողերը կալուածատուց ձեռքէն առնելով, անոնց տարեկան եկամուտ մը յատկացուց թիմար անուամբ, և հոլը ժողովրդեան վաճառեց, որով Հայ գիւղացիք հողատէր եղան ճիշդ ինչպէս որ 1789-ի յեղափոխութենէն յետոյ Գաղղիոյ գիւղացիք եղած էին։

Բայց Ալի փաշայի ժամանակ հակառակ անօրէնութիւն մ'եղաւ։ Թափու անուամբ հողային կալուածագրեր հրատարակեցան, և հարկ եղաւ որ ամեն հողատէր ունենայ անկէ։ Արդ Հայաստանի մէջ Քիւրդ և ուրիշ Իսլամ Տէրէկեյիներն, որք Թանզիմաթի բարենորոգիչ ոգիէն հրաւած կրած էին, այդ թափուները բաշխելու պաշտօն ունեցող անձանց մեծաքանակ կաշառք տալով, իրենց բոլոր նախկին հողերն, որք ժողովրդեան վաճառուած էին, իրենց վրա թափու ընելտուին, և նախնի կալուածատուութիւնն, առաջի օրինաց ջնջեալ, գործնականապէս վերահաստատեցան։ Հայք բողոքեցին։

Այս է ահա այն Բիւրակեան աղբիւրն, յորմէ կը բղխին Հայաստանի գրեթէ բոլոր հողային դատերն և մանաւանդ Քղվայ և Զարսանճաքի Հայոց հողային դանդատներն։

Արդ, կըսեմք որ այդ գանգատանց մէջ ամենայն արիութեամբ յարատև են։ Թրօթթը հազարապետն այն ժամանակ անշուշտ այս դարձուածոց անտեղեակ լինելով, քանի մ'ամիս առաջ իւր տեղեկագրոց մէջ Քրդաց վրա խօսելով կը գրէր միշտ թէ նոքա երկրին կալուածատէրերն են։ Ի՜նչ տխուր գաղափար։ Հայաստանի սրտին վրա Քրդաց կալուածատիրութիւն, երբ կը բողոքեմք Քիւրդստան անուան դէմ։ Բայց ինչո՞ւ համար Հայաստանի Հայք՝ օրէնքն իրենց վահան ընելով՝ չը պիտի զենուին այդ թէ ազգային և թէ տնտեսական ստորնութեան դէմ։ Ինչո՞ւ իրենց այս կենսական իրաւունքը չը պիտի պաշտպանեն, և կալուածատուութեան դէմ Եւրոպոյ գիւղացոց բրած պատմական կռիւներն ինչո՞ւ ազդեցութիւն չը պիտի ունենան մեր Հայաստանի ազգայնոց վրա։

Որչափ ուրեմն Հայաստանի Հայք իրաւունք ունին իրենց դատին մէջ յարատևելու, քանի որ արդէն Թանզիմաթն ալ իրենց կողմն է։

3.—Թէ պէտք է որ Պատրիարքարանն և գաւառաց Առաջնորդք ամենայն զօրութեամբ պաշտպանեն Հայաստանի Հայոց Հողային դատերն։

Այս առաջարկը բացատրութեան պէտք չունի, բայց ազգային շահուց պաշտպանու-

թեան տեսակէտով մտադիր եմք առանձին յօդուածի մը մէջ խօսել առաջնորդաց վրայ:

4.—Թէ պէտք է որ Հայաստանի մէջ Հայոց հողատիրութիւնը քաջալերուի և ընդարձակուի:

Աւելորդ կը համարիմք ասոր հարկն ապացուցանել: Ուստի, համառօտիւ պիտի յիշեմք այն միջոցները զորս մեք, և մեզ հետ ասողներ, յարմարագոյն դատած եմք այդ նպատակին հասնելու համար:

Այս միջոցներ են՝

Ա. Հայաստանի ժողովրդին պանդխտութեան առաջքն առնուլ.

Բ. Փոխատուութեան և խնայութեան սնտուկներ հաստատել Հայաստանի մէջ:

Գ. Հայ դրամատերաց Հայաստանի մէջ հողային առևտուր բանալ:

Դ. Երկրագործական ուսումը զարգացնել Հայաստանի մէջ:

Հարկ չը կայ պանդխտութենէ յառաջ եկած վնասները թուելու: Հայաստան հայոցմէ կը զարպուի, և պանդխտներն՝ ընդհանուր կերպիւ խօսելով՝ բարոյապէս և նիւթապէս ծանուած վիճակ մը կը ստանան իրենց պանդխտութեան վայրերուն մէջ, և շատ անգամ թշուառութեան և խնամոց պակասութեան զոհ կերթան:

Ասոր առաջքն առնելու համար պէտք է ախտ մեր գաւառաբնակ ազգայնոց միշտ բաստարել պանդխտութեան վնասները, քանի որ շատերք՝ ոչ թէ 'ի հարկէ՝ այլ 'ի սովորութենէ մը մղուելով, այդ վիճակին մէջ կը մտնեն զիրենք: Դալով անոնց, որք իրապէս հարկէ մը կը ստիպուին, պէտք է Հայաստանի մէջ անոնց գործ գտնելու միջոցը խորհիլ: Դրուագները կրնան յառաջ տարուիլ. կրօնագիտութեան և լեզուագիտութեան հետամտանար խնամք պէտք է տարուի անոնց. այց մեք առ այժմ ամենապարզ և ամենօգտակար միջոց մը պիտի յիշեմք:

Հայաստանի Հայուն ամենամեծ վէրքերէն մին վաշխառուութիւնն է: Իւր գործն յառաջանալու համար Քրդէն և Թրքէն 100-ին մինչև 100 տոկոս տալով դրամ փոխ առնուլը ստիպուի և ծանր տոկոսներու ներքև կը հեծէ: Ընդհանրապէս դրամագլխոյ չգոյութեան պատճառաւ է որ պանդխտութիւն յառաջ կուգայ: Բայց եթէ ազգին դրամատէրներն առ այժմ գոնէ միայն Կարնոյ, Մըշոյ, Վանայ և Անկայ մէջ փոխատուութեան սնտուկներ հաստատեն՝ իւրաքանչիւր քաղաքի համար գոնէ երեք հազար ոսկի դրամագլխով, հարիւրաւոր Հայք ո՛չ միայն դրամագլուխ գտնելով պանդխտութենէ կամ իրենց հողերը վաճառելէ կազատին, այլ և յօժարակամ կրնան սովորականէն աւելի տոկոս ալ վճարել այդ սնտուկներուն, և տակից դատ, Հայ դրամատերք կրնան իրենց փոխ տուած դրամագլուխը փոխառուաց կալուածներովն ապահովել: Ճահագիտութեան ապահով միջոց մը, որ միանգամայն ազգաշէն գործ մ'է:

Այս փոխատուութեան սնտուկներուն քով խնայութեան սնտուկներ ալ կրնան հաստատուիլ, այսինքն Հայաստանի Հայոց խնայութիւնները տոկոսի մը փոխարէն կրնան առնուելով պահպանուիլ, և քիչ մը բարձր տոկոսով ուրիշ Հայոց փոխ տրուիլ, որք դրամագլխոց պէտք ունին, որով փոխ տրուելիք դրամագլխոց քանակութիւնը կաւելնայ, և երբ Հայաստանի Հայոց մէկ մասը խնայութիւն ընել կուսնի և անօր օգուտները կը վայելէ, մէկ ուրիշ մասն ալ դրամագլուխ կը գտնէ և անով գործ կընէ: Այս միջոցն եթէ 'ի գործ դրուի, Հայաստանի Հայերն իրենց հողերը վաճառելու հարկէն կրնայ ազատել և միւս կողմէն պանդխտութեան դէմ հզօր պատուար մը լինիլ:

Հայ դրամատերաց ուրիշ խմբակ մ'ալ կրնայ Հայաստանի մէջ հողային առևտուր հաստատել, այսինքն հող գնել խիստ աժան գնով, քանի որ այժմ Հայաստանի մէջ և մանաւանդ Մշոյ արգաւանդ դաշտերուն մէջ հողերն անհաւատալի կերպիւ աժան են, և զանոնք աւելի բարձր գնով վաճառել այն Հայ գիւղացւոց, որք սակայն տակաւ առ տակաւ միայն կրնան անոր գինը վճարել, և կամ այդ հողերը վարձու տալ Հայոց, և կամ իրենց հաշուոյն մշակել տալ Հայ երկրագործաց: Մուշէն կը գրեն մեզ թէ այժմ բազում Հայ գիւղացիք, վերջին ծայր աղքատութենէ ըստիպեալ, ծիծաղելի գումարի մը համար իրենց հողերը Թրքայ կամ Քրդաց վաճառելու վրայ են, և կը խնդրուի մեզնէ որ այս իրողութիւնն ազգիս դրամատերաց ուշադրութեան ներկայեմք: Քիւրդերը մինչև ցարդ Հայաստանի լեռները բռնած էին. այժմ դաշտերն ալ կիջնեն՝ Հայ գիւղացւոց աղքատութենէն օգուտ քաղելով, որք ընչին գումարներու համար իրենց հողն անոնց կը վաճառեն: Բայց Հայ դրամատէրք և վաճառականք, համեստ գումարներով կրնան այդ հողերն իրենք գնել, և ոչ միայն շահագիտութիւն մ'ընել, այլ և ազգին օգտակար ծառայութիւն մը մատուցանել:

Իրաւ է որ այս ամեն ձեռնարկները կատարելու համար բարեհորդմունք պէտք են, որպէս զի ապահովութիւն հաստատուի. բայց՝ ճշմարիտը խօսելու համար աւելի հաւանական է որ Հայաստանի բոլոր Հայ բնակիչք երթան այդ երկրին, քան թէ կատարեալ ապահովութիւն մը հաստատուի անդ: Բայց ինչո՞ւ չեմք մտածեր թէ այդ անբարեկարգ վիճակին մէջ անգամ գաղտնի աշխարհավարութիւն մը շահ կրնայ ունենալ.... Քիչ մ'արի պէտք է լինիլ, առջի բերան դժուարութիւն կրնայ գտնուիլ, բայց պէտք է զործել, յարատև զործել. ըստ անտեսական առաձին, եթէ Հայք իրենք իրենց օգնեն, Աստուած ալ կօգնէ իրենց: Չեմք ուզեր աւելի խօսիլ այս մասին, այլ կը բաւականանամք ըսելով թէ՝ մեր ազգն իւր արդի ընթացքով հսկայաքայլ կը յառաջդիմէ դէպի ջնջումն իւր գոյութեան: Միայն դպրոցները բաւական չեն այս ազգին գոյութիւնն ու յառաջադիմութիւնն ապահովելու համար: Հողեր և արուեստներ ալ պէտք են. ազգին նիւթական, շոշափելի շահերն ալ մտածել պէտք է: Հայաստանի դպրոցաց մէջ լեզու մը պակաս պէտք է աւանդել, բայց արուեստ մ'աւելի ուսուցնել: Դպրոց և հող, լոյս և հարստութիւն, այս պէտք է լինի մեր ազգային նշանաբանը:

Վերջապէս, ամեն միջոց պէտք է ի գործ դնել պանդխտութիւնն արգելելու և Հայաստանի մէջ Հայոց հողատերութիւնը պաշտպանելու, քաջալերելու և ընդարձակելու համար:

5.—Թէ պէտք է որ Հայաստանի վանօրէից կալուածներուն պահպանութեան մասնաւոր խնամք տարուի:

Հայաստանի մէջ այժմ 200-ի մօտ վանք կայ, որք ընդարձակ հողեր ունին: Աչալրջութեամբ պէտք է հսկել անոնց պահպանութեան, և միանգամայն անոնցմէ օգուտ քաղելու միջոցները խորհիլ: Կառաջարկեմ 'ի մէջ այլոց, որ ազգին հացն ուտող վանականք իրենք զիրենք քիչ մը հողագործական ուսմանց տան, և այդ կալուածոց մէջ նոր դրութեամբ երկրագործութիւն ուսուցանեն շրջակայ գիւղերու Հայ պատանեաց և երիտասարդաց:

6.—Վերջապէս պէտք է յանձնախումբ մը կազմել ազգին նիւթական շահուց հսկելու համար:

Այս յանձնախմբին պաշտօնը պէտք է լինի ի մէջ այլոց.

Ա. Պանդխտութիւնն արգիլելու համար ամեն բարոյական և նիւթական միջոց 'ի գործ դնել:

Բ. Հայաստանի Հայոց հողային դատերը պաշտպանելու համար փաստաբաններ դրկել, և ուրիշ ամեն միջոցներով օգնել անոնց:

Գ. Ազգիս սեղանաւորները, վաճառականներն ու դրամատէրները քաջալերել իրենց դրամագլխին գոնէ մէկ փոքր մասն Հայաստանի մէջ գործածելու:

Դ. Հայաստանի մէջ ծախու հողերը գնել ազգային կալուածք անուամբ, և զանոնք զործածել թէ իրրև տիպար ագարակներ, թէ Հայ գործաւորաց վարձու տալով, և թէ տակաւին ուրիշ եղանակներով:

Ե. Երկրագործական ուսումները քաջալերել և տարածել մանաւանդ Հայաստանի մէջ:

Զ. Ընդհանուր ազգէն, կամ գոնէ կարող դասերէն տարեկան թեթև տուրք մ'առնուլ՝ ազգին նիւթական շահերն այս և ուրիշ միջոցներով պաշտպանելու համար:

Եթէ այսպիսի յանձնախումբ մը իւր պաշտօնը յաջողութեամբ կատարէ, ազգին ուրիշ տասն յանձնախմբերէն աւելի օգտակար կըրնայ լինիլ.

Ահա կարգ մը գաղափարներ, իրենց տարբերան վիճակին մէջ ներկայացեալ: Ամեն ազգասիրաց ուշադրութեան կը յանձնեմք գաղտնք: Բաւական վաղեցինք ստուերներու ետեւէն. պէտք է այժմ իրականութեանց դարձնեմք մեր ուշն և ոյժն: Հողագործութիւնն ու արուեստները պէտք է հիմնեցաց յառաջանան դպրոցներուն հետ: Եթէ, Հայ ազգը չէ որոշած Հրէական ազգին նմանիլ, այսինքն եթէ մտադիր չէ անտարբեր լինիլ իւր Հայրենի երկրին, միայն դպրոցները չեն բաւեր այդ հայրենի երկրին մէջ իւր գոյութիւնն ապահովելու: Այլ, ըսինք և նորէն կըսեմք թէ ազգին նիւթական և կենսական շահերն ալ պէտք է մեր խորին ուշադրութեան առարկայ լինին: Դարձեալ պիտի խօսիմք այս խնդրոյն վրա, բայց պէտք է ազգարարեմք թէ խօսելէ աւելի գործել հարկ է՝ եթէ իրական նպատակ մը կայ այս ազգը փրկելու:

(Մասիս)

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նիագարայի հերոսը պ. Բլօնդէն, որ Նիագարայի ջրընկեցի վրա կապած լարի վրայով անցաւ, Նոբերումս եկած էր Վիէննա: Նրա ետեւից եկել է և մի հարուստ լորդ, որը մի անագին գումարի դրաւ է դրել, թէ Բլօնդէն մինչև 60 տարեկան հասակն անպատճառ վայր կընկնի լարից, և կը ջախջախի իր գլուխը: Այժմ նա չար հրեշտակի նման հետևում է Բլօնդէնին ամեն տեղ. Լօրդին մնում է այլ ևս տասը տարի հետևել պ. Բլօնդէնին, որովհետև նա այժմ միայն 50 տարեկան է:

***

Ջեռնոմու Էրման վաղուց արդէն յայտնի է իր սրամիտ ու ճարպիկ ձեռնածութիւններով. այս օրերս նա մի չատ ծիծաղաշարժ սրամտութիւն գործ դրեց, որը դարձրեց իր վրա հասարակութեան ուշադրութիւնը: Պատմում են, որ այս օրերս Աֆրիկայից չորս զուլուներ էին եկել Փարիզ այնտեղ ներկայացումներ տալու դիտաւորութեամբ. Նրանք դիմում են Folies—Berger-ի կառավարչին, որը Նրանց վարձում է իր թատրոնի համար, և նրանց տանում է ներկայացնելու «Figaro» լրագրի խմբագրատանը. Զուլուները հագած են իրանց հայրենիքի բնական զգեստներով, որը կայանում է մի փոքրիկ կարճ գոգնոցի մէջ, բացի այդ, Նրանք զինված են վահանով, նիզակով, նետով և աղեղներով, որոնք կազմում են Զուլուլանդի որդոց նուիրական զէնքերը. Հէնց որ Նրանք մտնում են «Figaro»-ի խմբագրատան գեղեցիկ զարդարուն դահլիճները, ամենքը միասին վազում են դէպի վառարանը ուր վառվում էր կրակը, և որի կողքին նստած էր հռչակաւոր Էրման. Տեսնելով այդ վայրենիների անփոյթ մուտքը, նա բոլորովին անտարբեր կերպով մօտենում է զուլուներից մէկին, և նրա վահանից հանում է մէկ նարինջ, յետոյ մօտենում է երկրորդին, և նրա նիզակից հանում է մէկ խնձոր, յետոյ մօտենում է երրորդին և նրա քթից հանում է մի ուրիշ նարինջ, և այսպէս մի քանի ուրիշ զուարճութիւններ. Վայրենիները տեսնելով այս բանը բոլորովին ապշած մի տեսակ կիսաշրջան են կազմում պ. Էրմանի շուրջը, և մի երկու անորոշ վայրկեաններից յետոյ ամենքն սկսում են սարսափով փախչել. Folies-Berger-ի դիրեկտորը հազիւ հազ կարողանում է Նրանց համոզել, որ պ. Էրմանի արածը մի դատարկ ձեռնածութիւն հանաք է. Վերջապէս մեծ դժուարութիւններից յետոյ, Նրանք համաձայնում են վերադառնալ այն կարծելով հրէշի մօտ. Խմբագրատանը Նրանց առաջարկում են նարինջներ, խնձորներ և զանազան պտուղներ, բայց Նրանք այդ բոլորի վրա մի առանձին կասկածանքով են նայում, կարծելով թէ այդ հիւրասիրութեան մէջ թաղնված է մի որ և է դրամա. բայց երբ պ. Էրման և միւսներն սկսում են ուտել, այն ժամանակ, Նրանք էլ նոր վստահանում են հետևել ուրիշների օրինակին. Folies-Berger-ի զուլուսների առաջին ներկայացումից միայն գոյացաւ 37,450 ֆրանկ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 փետրվարի: Բոլոր թագակիրները, պապը և ֆրանսիական հանրապետութիւնը շնորհաւորեցին Թագաւոր Կայսրին, Նրա նոր փտանգից հրաշալի կերպով ազատվելու մասին: Գրեթէ ամբողջ եւրոպական մամուլը սարսափով և զզուանքով է վերաբերվում դէպի Զմերային պալատի մէջ փետրվարի 5-ին կատարված նենգամիտ եղեռնագործութիւնը: Այսօր կատարվեցաւ ձայթիւնից սպանվածների, և վիրքերից մեռած սարաստիճան զինուորականների թաղման հանդէսը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 փետրվարի: Պետական բանկի 5% տոմսակն առաջին շրջանի արժէ 93 ր. 50 կ., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93½ ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 225 ր. 50 կ., երկրորդ 227 ր. արևելեան առաջին փոխառութեան տոմսակն արժէ 90⅝ր., երկրորդ 90⅝ ր., երրորդ 90⅝ ր., ոսկին արժէ 7 ր. 66 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25⅝ պէնս. ռուսաց 100 ռուբլ Բերլինի վրա արժէ 219 մարկ 50 պֆ., Համբուրգի վրա—218 մարկ 50 պֆէնինգ, Փարիզի վրա 269 ֆրանկ: Տրամադրութիւնը խաղաղ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 փետրվարի: «Правит. Вѣстн.» լրագրում տպված է հետևեալը. «Զմերային պալատի փետրվարի 5-ին ձայթիւն առաջացաւ ներքնայարկում. մարդաբնակ տան կամարների նշանաւոր մասը և վառարանը քանդված են. դռները քարքանդ են եղած. պահականոցի առաստաղի ներքին կամարի վրա յայտնվեցան երկու ձեղքեր. յատակի մեծ մասը քանդված է. սեղանատան պարկէտը տեղահան է եղել. պատը ձեղքվել է. պալատում բաւականին քանակութեամբ ապակիներ են ջարդված. քնիչների կարծիքով ձայթիւնը երկու պուդ դինամիտի քանակութեամբ է առաջացած. երևի, ձայթիւնից առաջ, դինամիտը գտնվում էր ներքնայարկի մարդաբնակ սենեակի վառարանի մէջ, կամ վառարանի վրա: Կայսրի ճաշը, որ սովորաբար երեկոյեան 6 ժամին է լինում, այդ օրը յետաձգված էր մինչև Էչսպենեան իշխանի գալուստը: Ձայթիւնն առաջացաւ վեցից 20 րոպէ անցած, հէնց այն միջոցին, երբ Կայսրը հանդիպեց իշխանին, որը դեռ նոր էր եկել երկաթուղու կայարանից:

ՓԱՐԻԶ, 8|20 փետրվարի: Հաստատ է, որ այստեղ կալանաւորված է ռուսահպատակ Գարման, որը մեղադրվում է Մոսկվայի երկաթուղու վրա գործված եղեռնագործութեան մէջ: Պաշտօնապէս պահանջված է, որ մեղադրեալն յանձնեն, և այդ պահանջը կը հաստատվի պաշտօնական կերպով:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆԻ